



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ  
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԸ  
2016 թվականի հուլիսի 1-ի դրությամբ

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Տեղեկագրի ծածկագիրը՝ 5100-201

ԵՐԵՎԱՆ - 2016

Տեղեկատվության բազմազանմամբ և տեղեկատվական հոսքերի ինտենսիվացմամբ բնութագրվող արդի աշխարհում էապես կարևորվում է «վիճակագրական եռանկյունու անկյունները զբաղեցնող», տարաբևեռ հակումներ ունեցող, պաշտոնական վիճակագրության երեք մասնակիցների՝ ռեսպոնդենտների, սպառողների և հարկատուների հնարավորին «մեկտեղումը», հատկապես՝ ազգային և միջազգային չափանիշներով պերցենտիլայի (կոմունիկացիոն ունակությունների համահարթեցման) պահանջների տեսանկյունով:

ՀՀ ԱՎԾ-ն շնորհակալություն է հայտնում բոլոր ռեսպոնդենտներին (տեղեկատվություն տրամադրողներին), որոնց կողմից տրամադրված տեղեկատվության վրա է խարսխված սույն վիճակագրական հրապարակումը և ողջունում է նրանց ու հարկատուների, որպես վիճակագրական տեղեկատվության սպառողների, արձագանքներն ու առաջարկները վերոհիշյալ նկատառումներով վիճակագրական հրապարակումների հետագա կատարելագործման համար:

Հրապարակումների հետագա կատարելագործման համար առաջարկությունները և մեկնաբանությունները խնդրում ենք ներկայացնել ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժին:

**0010, Երևան, Հանրապետության պողոտա, Կառավարական տուն, 3**

**Հեռ. (+374 11) 52-33-56**

**Ֆաքս (+374 11) 52-19-21**

**Էլեկտրոնային փոստ՝ [info@armstat.am](mailto:info@armstat.am)**

**ՀՀ ԱՎԾ կայքէջ՝ <http://www.armstat.am>, հայելային կայքէջ <http://www.armstat.info>**

**<http://www.armstatbank.am>, <http://www.armdevinfo.am>**

## Ընթերցողի ուղեցույց

Վիճակագրական տեղեկագրում բերված վարչատարածքային բաժանման հիմք են հանդիսացել «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքները, որոնց համաձայն ՀՀ տարածքը բաժանվում է 10 մարզերի և Երևանի քաղաքային համայնքի (12 վարչական շրջաններով):

Վիճակագրական տեղեկագրում բերված բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալները ներկայացված են քաղաք, գյուղ կտրվածքով ըստ.

- մարզերի
- տարածաշրջանների (նախկին վարչական շրջաններ)
- մարզկենտրոնների
- տարածաշրջանային կենտրոնների

Վիճակագրական տեղեկագրում տեղ գտած ժողովրդագրական տերմինների բացատրությունները բերված են **հավելվածում**:

*Պայմանական նշաններ.*

*- երևույթը բացակայում է*

*0.0 ցուցանիշը փոքր է չափման միավորից*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԸ**  
**2016թ. ՀՈՒԼԻՍԻ 1-ի ԴՐՈՒԹՅԱՄԲ**  
*(2011թ. մարդահամարի հիմքով վարվող ընթացիկ հաշվառմամբ)*

(հազար մարդ)

	Ընդամենը	Քաղաք	Գյուղ
<b>Հայաստանի Հանրապետություն</b>	<b>2 995.1</b>	<b>1 905.7</b>	<b>1 089.4</b>
<b>ք. Երևան</b>	<b>1 074.1</b>	<b>1 074.1</b>	-
<b>Արագածոտնի մարզ</b>	<b>129.4</b>	<b>28.9</b>	<b>100.5</b>
Աշտարակի տարածաշրջան	61.4	17.9	43.5
ք. Աշտարակ (մարզկենտրոն)	18.7	17.9	0.8
Ապարանի տարածաշրջան	21.8	6.3	15.5
ք. Ապարան	6.3	6.3	-
Արագածի տարածաշրջան	13.5	-	13.5
Թալինի տարածաշրջան	32.7	4.7	28.0
ք. Թալին	4.7	4.7	-
<b>Արարատի մարզ</b>	<b>258.8</b>	<b>73.0</b>	<b>185.8</b>
Արտաշատի տարածաշրջան	90.3	20.6	69.7
ք. Արտաշատ (մարզկենտրոն)	20.6	20.6	-
Արարատի տարածաշրջան	89.5	31.9	57.6
ք. Արարատ	20.3	20.3	-
ք. Վեդի	11.6	11.6	-
Մասիսի տարածաշրջան	79.0	20.5	58.5
ք. Մասիս	20.5	20.5	-
<b>Արմավիրի մարզ</b>	<b>266.2</b>	<b>84.4</b>	<b>181.8</b>
Արմավիրի տարածաշրջան	112.5	37.7	74.8
ք. Արմավիր (մարզկենտրոն)	28.8	28.8	-
ք. Մեծամոր	8.9	8.9	-
Բաղրամյանի տարածաշրջան	19.8	-	19.8
Էջմիածնի տարածաշրջան	133.9	46.7	87.2
ք. Վաղարշապատ	46.7	46.7	-

	Ընդամենը	Քաղաք	Գյուղ
<b>Գեղարքունիքի մարզ</b>	<b>231.4</b>	<b>69.0</b>	<b>162.4</b>
Գավառի տարածաշրջան	50.5	19.4	31.1
ք. Գավառ (մարզկենտրոն)	19.4	19.4	-
Կրասնոսելսկի տարածաշրջան	13.4	5.7	7.7
ք. Ճամբարակ	5.7	5.7	-
Մարտունու տարածաշրջան	89.4	12.1	77.3
ք. Մարտունի	12.1	12.1	-
Սևանի տարածաշրջան	40.1	19.2	20.9
ք. Սևան	20.6	19.2	1.4
Վարդենիսի տարածաշրջան	38.0	12.6	25.4
ք. Վարդենիս	12.6	12.6	-
<b>Լոռու մարզ</b>	<b>223.9</b>	<b>132.3</b>	<b>91.6</b>
ք. Վանաձոր (մարզկենտրոն)	81.9	81.9	-
Գուգարքի տարածաշրջան	20.4	-	20.4
Թումանյանի տարածաշրջան	39.0	17.2	21.8
ք. Ալավերդի	13.6	13.0	0.6
ք. Ախթալա	2.1	2.0	0.1
ք. Թումանյան*	4.4	1.6	2.8
ք. Շամլուղ	0.7	0.6	0.1
Սպիտակի տարածաշրջան	36.0	12.9	23.1
ք. Սպիտակ	12.9	12.9	-
Ստեփանավանի տարածաշրջան	27.0	12.8	14.2
ք. Ստեփանավան	13.2	12.8	0.4
Տաշիրի տարածաշրջան	19.6	7.5	12.1
ք. Տաշիր	7.5	7.5	-

\* Համաձայն «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (24.11.2015թ.) ՀՀ օրենքի հոդված 6-ի, **Թումանյան համայնքի վարչական կազմում ներառված են** ք.Թումանյանը և Մարց, Քարինջ, Լորուտ, Շամուտ, Աթան, Ահնիձոր, Քոբեր կայարանի գյուղերը:

	Ընդամենը	Քաղաք	Գյուղ
<b>Կոտայքի մարզ</b>	<b>253.9</b>	<b>137.9</b>	<b>116.0</b>
Հրազդանի տարածաշրջան	84.3	62.8	21.5
ք. Հրազդան (մարզկենտրոն)	41.1	41.1	-
ք. Չարենցավան	20.5	20.5	-
ք. Ծաղկաձոր	1.2	1.2	-
Կոտայքի տարածաշրջան	111.7	53.9	57.8
ք. Արովյան	44.5	44.5	-
ք. Բյուրեղավան	9.4	9.4	-
Նախիբի տարածաշրջան	57.9	21.2	36.7
ք. Եղվարդ	11.9	11.9	-
ք. Նոր Հաճն	9.3	9.3	-
<b>Շիրակի մարզ</b>	<b>242.4</b>	<b>141.6</b>	<b>100.8</b>
ք. Գյումրի (մարզկենտրոն)	117.4	117.4	-
Ախուրյանի տարածաշրջան	39.5	-	39.5
Ամասիայի տարածաշրջան	6.3	-	6.3
Աշոցքի տարածաշրջան	9.3	-	9.3
Անիի տարածաշրջան	19.0	5.5	13.5
ք. Մարալիկ	5.5	5.5	-
Արթիկի տարածաշրջան	50.9	18.7	32.2
ք. Արթիկ	18.7	18.7	-
<b>Սյունիքի մարզ</b>	<b>139.1</b>	<b>93.9</b>	<b>45.2</b>
Կապանի տարածաշրջան	57.3	49.6	7.7
ք. Կապան (մարզկենտրոն)	42.6	42.6	-
ք. Քաջարան	7.0	7.0	-
Գորիսի տարածաշրջան	40.8	20.3	20.5
ք. Գորիս	20.3	20.3	-

	Ընդամենը	Քաղաք	Գյուղ
Մեղրու տարածաշրջան	11.0	8.8	2.2
p. Մեղրի	4.5	4.5	-
p. Ագարակ	4.3	4.3	-
Սիսիանի տարածաշրջան	30.0	15.2	14.8
p. Սիսիան	14.9	14.9	-
p. Դաստակերտ	0.3	0.3	-
<b>Վայոց ձորի մարզ</b>	<b>50.8</b>	<b>17.8</b>	<b>33.0</b>
Եղեգնաձորի տարածաշրջան	33.1	7.7	25.4
p. Եղեգնաձոր (մարզկենտրոն)	7.7	7.7	-
Վայքի տարածաշրջան	17.7	10.1	7.6
p. Վայք	5.7	5.7	-
p. Ջերմուկ	5.4	4.4	1.0
<b>Տավուշի մարզ</b>	<b>125.1</b>	<b>52.8</b>	<b>72.3</b>
Իջևանի տարածաշրջան*	46.6	20.7	25.9
p. Իջևան (մարզկենտրոն)	20.7	20.7	-
p. Դիլիջան**	24.5	17.6	6.9
Նոյեմբերյանի տարածաշրջան	28.3	6.8	21.5
p. Նոյեմբերյան	4.9	4.9	-
p. Այրում	1.9	1.9	-
Տաուշի տարածաշրջան	25.7	7.7	18.0
p. Բերդ	7.7	7.7	-

\* Համաձայն «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (24.11.2015թ.) ՀՀ օրենքի հոդված 6-ի, **Իջևանի տարածաշրջանի կազմից**՝ Աղավնավանք, Հովք, Խաչարձան, Ճերմակավան և Գեղատափ գյուղերը տեղափոխվել են Դիլիջան համայնքի ենթակայության ներքո:

\*\* Համաձայն «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (24.11.2015թ.) ՀՀ օրենքի հոդված 6-ի, **Դիլիջան համայնքի վարչական կազմում ներառված են** p.Դիլիջանը և Հաղարծին, Թեղուտ, Գոշ, Աղավնավանք, Հովք, Խաչարձան, Ճերմակավան և Գեղատափ գյուղերը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ  
ԹՎԱՔԱՆԱԿՆ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ ԵՎ Ք.ԵՐԵՎԱՆԻ  
2016 թ. ՀՈՒԼԻՄԻ -ի ԴՐՈՒԹՅԱՄԲ**

(հազար մարդ)

	Ընդամենը	Քաղաք	Գյուղ
Հայաստանի Հանրապետություն	2 995.1	1 905.7	1 089.4
ք. Երևան	1 074.1	1 074.1	-
Արագածոտնի մարզ	129.4	28.9	100.5
Արարատի մարզ	258.8	73.0	185.8
Արմավիրի մարզ	266.2	84.4	181.8
Գեղարքունիքի մարզ	231.4	69.0	162.4
Լոռու մարզ	223.9	132.3	91.6
Կոտայքի մարզ	253.9	137.9	116.0
Շիրակի մարզ	242.4	141.6	100.8
Սյունիքի մարզ	139.1	93.9	45.2
Վայոց ձորի մարզ	50.8	17.8	33.0
Տավուշի մարզ	125.1	52.8	72.3

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ**  
**ԹՎԱՔԱՆԱԿՆ ԸՍՏ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ**  
**2016 թ. ՀՈՒԼԻՄԻ 1-ի ԴՐՈՒԹՅԱՄԲ**  
*(2011թ. մարդահամարի հիմքով վարվող ընթացիկ հաշվառմամբ)*

(հազար մարդ)

	Ընդամենը
<b>Ք. ԵՐԵՎԱՆ</b>	<b>1 074.1</b>
Աջափնյակ	109.1
Ավան	53.0
Արաբկիր	115.5
Դավիթաշեն	42.5
Էրեբունի	126.8
Կենտրոն	125.6
Մալաթիա-Սեբաստիա	136.2
Նոր-Նորք	130.6
Նորք-Մարաշ	11.8
Նուբարաշեն	9.8
Շենգավիթ	139.2
Քանաքեռ-Զեյթուն	74.0



## **ՀԱՎԵԼՎԱԾ**

Բնակչության թվաքանակի վերաբերյալ տեղեկատվության ստացման սկզբնաղբյուրը **բնակչության մարդահամարներն են:**

Բնակչության թվաքանակի ընթացիկ գնահատականը տրվում է բնակչության վերջին մարդահամարի արդյունքների հիման վրա (2011թ. հոկտեմբերի 12-21-ն անցկացված), որոնց ամեն տարի ավելացվում են տվյալ տարածքի ծնվածների և եկողների (հաշվառվածների) թվաքանակը, հանվում են մահացածների և տվյալ տարածքից մեկնածների (հաշվառումից հանվածների) թվաքանակը: Ծնվածների և մահացածների մասին տեղեկությունները ստացվում են ծննդյան և մահվան վերաբերյալ ակտերի հիման վրա, որոնց երկրորդ օրինակները հավաքագրվում են ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման (ՔԿԱԳ) տարածքային բաժիններից, իսկ բնակչության միգրացիայի (հաշվառում/դուրս գրում) վերաբերյալ տվյալները ստացվում են ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունից, ըստ բնակչության վայրի հաշվառման և դուրս գրման՝ վարչական գրանցումներով ձևավորված էլեկտրոնային տեղեկատվական շտեմարաններով, եռամսյակային պարբերականությամբ: Մակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ հաշվառման կանգնելու և հաշվառումից դուրս գրվելու գործառույթներն ուղղակիորեն կախված են քաղաքացիների կամքից, և որպես դրա հետևանք, այդ կարգի գրանցումները միգրացիոն տեղաշարժերի ամբողջական պատկերը չեն արտացոլում, այդ ցուցանիշներն ենթարկվում են վերագնահատման (ճշգրտման) հաշվետու ժամանակաշրջանին նախորդող տարվա տ/տ կենսամակարդակի ամբողջացված հետազոտության հարցաթերթի՝ «միգրացիա» բաժնում զետեղված տվյալներով հավաքագրված ամփոփ ցուցանիշների միտումների հիման վրա:

Բնակչության բաշխումը քաղաք և գյուղ կտրվածքով կատարվում է ըստ նրանց բնակչության (հաշվառման) վայրի: Քաղաքային են համարվում այն բնակավայրերը, որոնք «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված են որպես քաղաքներ, մնացած բնակավայրերը համարվում են գյուղական:

Մարդահամարի արդյունքներով հաշվառվում է բնակչության երկու կատեգորիա՝ **մշտական բնակչություն և առկա բնակչություն:**

Մշտական բնակչության թվաքանակում հաշվառվում են այն անձինք, ովքեր մշտապես բնակվում են տվյալ տարածքում, ներառյալ մարդահամարի պահին ժամանակավոր բացակայողները:

Ժամանակավոր բացակայողների թվաքանակում հաշվառվում են այն անձինք, ովքեր մարդահամարի պահին իրենց հիմնական (մշտական) բնակչության վայրից բացակայում են մինչև մեկ տարի ժամկետով<sup>1</sup>:

Առկա բնակչության թվաքանակում հաշվառվում են այն անձինք, ովքեր մարդահամարի պահին գտնվել են տվյալ տարածքում, ներառյալ ժամանակավոր բնակվողները:

Ժամանակավոր բնակվողների թվաքանակում հաշվառվում են այն անձինք, ովքեր մարդահամարի պահին չբնակվելով մշտապես՝ գտնվում են տվյալ տարածքում մինչև մեկ տարի ժամկետով:

<sup>1</sup> «2010թ. մարդահամարների և կացարանների հաշվառման Եվրոպայի վիճակագիրների կոնֆերանսի հանձնարարականներ» մշակված Եվրոստատի հետ համագործակցությամբ, ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով, ՄԱԿ, Նյու Յորք և ժնն, 2006, գլուխ III «Հաշվառման ենթակա բնակչություն», կետ 167 «Ժամանակավորապես բացակայողներ», էջ 56 (ռուսերեն տարբերակ), էջ 37 (անգլերեն տարբերակ):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԸ  
2016 թվականի հուլիսի 1-ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Տեղեկագիրը պատրաստել է

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և  
ժողովրդագրության բաժինը

Թողարկման պատասխանատու՝

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական  
տեղեկատվության տարածման և  
հասարակայնության հետ կապերի բաժին

Տպագրված է

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի  
տպագրակազմարարական  
և պատճենահանման աշխատանքների բաժնում

«Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը  
2016 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ» վիճակագրական տեղեկագիրը  
կիրառարակվի 2016թ. հոկտեմբերին:

*Տպաքանակը 75 օրինակ:*

*Հանձնվել է տպագրության 29.07.2016թ.*